

մէկ մասը միայն ծանօթացած է ցուցա-
կազրու թեամբ: Այսպիսիներ կան՝ Վիեն-
նայի Միլիթարեանց հաւաքման մէջ (համտ.
Հ. Յ. Տաշեան, Յուցակ Չեռագրաց,
Թ. 170, 431, 4) — այսպիսի է Բրիտա-
նական թանգարանի Ms. Or. 2612, գրուած
1527ի (համտ. C. F. Conybeare, Cata-
logue etc., Nr. 32) — այսպիսիներ՝ Վե-
նետոյց Միլիթարեան Հարց հաւաքման մէջ
(համտ. Հ. Բ. Սարգսեան, Մայր Յու-
ցակ եւն, Թ. 52, 114 եւն) — եւ նաեւ
այլուր: Երբ վերոյիշեալ ծեմիլ բռնա-
դատուած էր իսլամանալ, փախստականք
կրցած էին ազատել եկեղեցւոյն հին մա-
զաղտթեայ երկաթագիր Աւետարանը, որ
անոր համար «Ծեմիլ-Աւետարան», կը կո-
չուէր: Ասի վերանորոգուած էր 1621ին:
Թուրք գրաքննութիւնը չէր ներեր որ հրա-
տարակուէր գոնէ այս նորոգման պատմական
յիշատակարանը, որ «կրօնական յուզիչ
բաներ կ'աւանդէ¹»: Սպերի Մաթուսանց
գիւղը գտնուած այս հին Չեռագիրը թէ
այժմ ինչ եղած է 1915ին աղէտքէն ետքը՝
չենք գիտեր:

¹ Համտ. Մ. Սաւուրեան, Սպերի հնութիւնները.
ի թերթին «Արեւելք» 1904, Թ. 5579: